*Հավելված թիվ 1*
*ՀՀ փաստաբանների պալատի նախագահի*
*30.09.2019թ. թիվ 387-Ն որոշման*

# Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

***ՀՀ փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով հրավիրելու մասին***

ք. Երևան, Զաքյան 7-2 30.09.2019թ.

***Հարգելի փաստաբաններ,***

Սույնով Դուք ծանուցվում եք այն մասին, որ **2019 թվականի հոկտեմբերի 19-ին, ժամը $09^{00}$-ից մինչև $18^{00}$-ն** ՀՀ փաստաբանների պալատի՝ Երևան քաղաքի Զաքյան 7-2 հասցեում գտնվող վարչական շենքի 2-րդ հարկի սրահում, հեռակա կարգով (առանց ընդհանուր ժողովի գումարման) տեղի է ունենալու Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի հերթական ընդհանուր ժողով՝ հետևյալ օրակարգային հարցերով.

1) ***Փաստաբանի վարքագծի կանոնագրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին.***
2) ***Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու (նոր խմբագրությամբ շարադրելու) մասին.***
3) ***«Փաստաբանի օր» սահմանելու մասին:***

Օրակարգային հարցերով **քվեարկությունը** սկսվում է **2019 թվականի հոկտեմբերի 19-ին, ժամը $09^{00}$-ից և ավարտվում է նույն օրը՝ ժամը $18^{00}$-ին**:

Յուրաքանչյուր փաստաբան **քվեարկությանը պետք է մասնակցի անձամբ:**

Քվեարկության օրը պետք է ներկայանալ **անձը հաստատող փաստաթղթով կամ փաստաբանի վկայականով:**

Քվեարկության գաղտնիությունը քվեարկող փաստաբանի համար ոչ միայն իրավունք է, այլև՝ պարտականություն:

Ընդհանուր ժողովի հետ կապված անհրաժեշտ այլ տեղեկություններին կարող եք ծանոթանալ ՀՀ փաստաբանների պալատի www.advocates.am կայքէջից:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի
աշխատակազմ